**Իրավաբանների հայկական ասոցիացիայի վերջին հինգ տարվա ընթացքում առնվազն երեք տարվա գործունեության փորձի և այդ ժամանակահատվածում իրականացրած առնվազն երկու ծրագրերի մասին տեղեկատվություն**

Հիմք ընդունելով ՀՀ ՆԳ նախարարին կից հասարակական խորհրդի կազմում ընդգրկվելու հայտերի ներկայացման վերաբերյալ 2025 թվականի նոյեմբերի 24-ի հայտարարությունը և ՀՀ վարչապետի 2025 թ. սեպտեմբերի 22-ի N 835-Լ որոշումը, որով սահմանվում է խորհրդի կազմում ընդգրկվելու կարգը, գտնում ենք, որ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ն (ԻՀԱ) համապատասխանում է նշված որոշմամբ սահմանված խորհրդի անդամներին և հայտատուներին ներկայացվող չափանիշներին, մասնավորապես՝ ունի երկարամյա փորձ հասարակական վերահսկողության, քաղաքականության մշակումների մոնիթորինգի, հակակոռուպցիոն, բարեվարքության և կորպորատիվ կառավարման մեխանիզմների զարգացման, ինչպես նաև հանրային կառավարման թափանցիկության բարձրացման ոլորտներում: Կազմակերպության մասնագիտական ներուժը, իրականացրած ծրագրերն ու կուտակած փորձառությունը թույլ են տալիս արդյունավետ մասնակցել խորհրդի աշխատանքներին, ներկայացնել հիմնավորված առաջարկություններ և աջակցել ոլորտային քաղաքականությունների բարելավմանը:

ԻՀԱ-ն շուրջ երեք տասնամյակ գործում է որպես կայացած և ինստիտուցիոնալ կարողություններ ունեցող փորձագիտական կառույց՝ իրականացնելով ծրագրեր, նախաձեռնություններ և հանրային վերահսկողության մեխանիզմներ, որոնք ուղղված են տարբեր ոլորտներում բարեփոխումների առաջմղմանը:

**Կազմակերպության կանոնադրական նպատակները ներառում են՝**

- մարդու իրավունքների պաշտպանության, ժողովրդավարական ինստիտուտների զարգացման և իրավունքի գերակայության ապահովման գործընթացներին նպաստելը,
- իրավագիտակցության և իրավական մշակույթի բարձրացումը՝ հանրային իրազեկման, կրթական ծրագրերի և մասնագիտական կարողությունների ձևավորման միջոցով,
- փոքր և միջին բիզնեսի, այդ թվում սոցիալական ձեռնարկատերերի ներկայացուցիչների իրավական գիտելիքների մակարդակի բարձրացմանը նպաստելը՝ ուժեղացնելով նրանց իրավական, բարեխղճության և այլ կարողությունները, ինչպես նաև իրականացնելով նրանց իրավունքների պաշտպանությունը,
- պետական կառավարման համակարգում բարեխիղճ, թափանցիկ և հաշվետու գործունեության խթանումը,
- հանրային վերահսկողության, քաղաքացիների մասնակցային մեխանիզմների և բաց կառավարման գործիքների զարգացումը,

- մասնագիտական, այդ թվում՝ իրավաբանական անվճար աջակցություն ցուցաբերում՝ պետական, մասնավոր և հանրային ոլորտների շահագրգիռ անձանց,
- արդարադատության, հակակոռուպցիոն և իրավական համակարգերի բարելավմանը նպաստելը, ինչպես նաև այլ նպատակներ, որոնք ուղղված են իրավական համակարգի ամրապնդմանը, արդարադատության մատչելիության և հանրային վստահության բարձրացմանը:

ԻՀԱ-ն ունի կայացած մասնագիտական թիմ և պաշտոնական կայքէջ (www.armla.am ), ինչպես նաև ակտիվ գործարկում է սոցիալական էջերը, որտեղ ներկայացված է կազմակերպության գործունեության վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն:

Հավաստում ենք, որ սույն հրամանով պահանջվող չափանիշներին համապատասխան՝ վերջին հինգ տարվա ընթացքում ԻՀԱ-ն իրականացրել է առնվազն երկու ծրագրեր, որոնք համահունչ են Ներքին գործերի նախարարության հիմնական ոլորտներին և ուղղություններին: Մասնավորապես՝

1. «Իրավաբանների հայկական ասոցիացիան» Եվրոպական Միության ֆինանսավորմամբ իրականացվող «Հայաստանում արդարադատության ոլորտի բարեփոխումների մշտադիտարկում» ծրագրի շրջանակում կնքված ենթադրամաշնորհային համաձայնագրի հիման վրա, իրականացրել է «Արդյունավետ և ներառական ոստիկանական բարեփոխումների հանրային վերահսկողություն և իրազեկում» ծրագիրը[1]: Ծրագրի շրջանակներում ԻՀԱ-ն իրականացրել է ՀՀ ոստիկանության բարեփոխումների ռազմավարության 2024–2026 թթ. գործողությունների ծրագրի 2024–2025 թթ. (I կիսամյակ) նախատեսված գործողությունների հասարակական մշտադիտարկում և գնահատում: Մշտադիտարկման գործընթացի ընթացքում կազմակերպվել են առցանց ֆոկուս խմբային քննարկումներ հիմնական շահագրգիռ կողմերի հետ, ներառյալ ծրագրի իրականացմանն առնչվող պետական կառույցները, քաղաքացիական հասարակության կազմակերպությունները և ոլորտային անկախ փորձագետները[2]:

   Որակական և քանակական մեթոդների համակցմամբ հավաքագրվել է ռազմավարության իրականացման ընթացքի վերաբերյալ համապարփակ և ամբողջական տեղեկատվություն, որի հիման վրա իրականացվել են երկու մակարդակի գնահատումներ՝

   - **ընթացակարգային (քանակական)**՝ գործողությունների կատարման աստիճանի, ժամկետների, արդյունավետության և միջանկյալ արդյունքների գնահատմամբ,
   - **ազդեցության մակարդակի (որակական)**՝ իրականացված միջոցառումների երկարաժամկետ ազդեցության, շահառուների ներգրավվածության և համակարգային փոփոխությունների խորության վերլուծությամբ:

---

[1] https://armla.am/55033.html
[2] https://armla.am/55073.html

Մշտադիտարկման արդյունքում ձևավորվել է զեկույցի նախագիծ, որը ուղարկվել է ռազմավարության իրականացման պատասխանատու և համակատարող պետական մարմիններին, ինչպես նաև այլ շահագրգիռ կառույցներին՝ դիտարկումներ և առաջարկություններ ստանալու նպատակով։ Ստացված դիտարկումները քննարկվել և ամփոփվել են, ինչի արդյունքում մշակվել է զեկույցի վերջնական տարբերակը[3]։ Վերջնական զեկույցում ներկայացված են նաև մեթոդական, բովանդակային և կազմակերպչական մի շարք առաջարկություններ՝ ոստիկանության բարեփոխումների գործընթացի շարունակական կատարելագործման, թափանցիկության և հանրային հաշվետվողականության բարձրացման ուղղությամբ։

Իրականացված մշտադիտարկումը նպատակ ուներ **ապահովել ոստիկանության բարեփոխումների նկատմամբ շարունակական, հիմնավորված և մասնագիտական հանրային վերահսկողություն**, ինչը կարևորագույն գործոն է ՆԳՆ-ի համար՝ հատկապես համակարգային բարեփոխումների արդյունավետությունն ու կայունությունը բարձրացնելու տեսանկյունից։ Հանրային վերահսկողության մեխանիզմների գործարկումը թույլ է տալիս ՆԳՆ-ին ստանալ արտաքին, անկախ գնահատականներ, որոնք իրենց հերթին նպաստում են ռազմավարական որոշումների կայացմանը, թերությունների վաղ հայտնաբերմանը, քաղաքականությունների ճշգրտմանը և իրականացման գործընթացի առավել թափանցիկ կազմակերպմանը։ Մշտադիտարկման գործընթացը ծառայում է որպես **հավելյալ կառավարման ու վերահսկողության գործիք**, որը աջակցում է ՆԳՆ-ին՝ ապահովելու հաշվետվողական, ապացույցահեն և արդյունքներով պայմանավորված բարեփոխումների իրագործում։

**Ծրագրի մեկ այլ կարևոր բաղադրիչ էր «Խոսի՛ր արդարության մասին» շարադրությունների և «Պատկերի՛ր արդարությունը» նկարչական մրցույթների կազմակերպումը**[4]։ Նման նախաձեռնությունները կարևոր նշանակություն ունեն հատկապես երիտասարդների շրջանում արդարադատության, ոստիկանության, մարդու իրավունքների և օրենքի գերակայության վերաբերյալ ընկալումների ձևավորման ու խորացման համար։ Մրցույթները միայն կրթական կամ ստեղծագործական միջոցառում չեն. դրանք հանդիսանում են **հանրային կարծիքի ուսումնասիրման անմիջական հարթակ**, որը ՆԳՆ-ին հնարավորություն է տալիս հասկանալու երիտասարդ սերնդի վերաբերմունքը ոստիկանության ծառայության, բարեփոխումների անհրաժեշտության, արդար իրավակարգի և պետական կառավարման պրակտիկայի նկատմամբ։

Այս միջոցառումները խթանում են երիտասարդների ներգրավվածությունն ու մասնակցությունը հանրային գործընթացներին, զարգացնում քննադատական ու պատասխանատու մտածողությունը, ինչպես նաև նպաստում լայն հանրության իրազեկվածության բարձրացմանը։ Արդյունքում՝ դրանք մթնոլորտ են ստեղծում վստահության ամրապնդման, ոստիկանություն–հասարակություն համագործակցության խորացման և բարեփոխումների ընկալելիության բարձրացման համար, ինչը ռազմավարական առումով չափազանց կարևոր է ՆԳՆ-ի համար։

---

[3] https://armla.am/wp-content/uploads/2025/09/Police-Reform-Monitoring-Report-Final-22.09.25.pdf
[4] https://armla.am/51086.html

2. «Իրավաբանների հայկական ասոցիացիան» Եվրոպական Միության ֆինանսավորմամբ իրականացվող «Հայաստանում արդարադատության ոլորտի բարեփոխումների մշտադիտարկում» ծրագրի շրջանակում կնքված ենթադրամաշնորհային համաձայնագրի հիման վրա, իրականացրել է «Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածների իրավունքների պաշտպանության մեխանիզմների ուժեղացում» ծրագիրը[5]:

Ծրագրի նպատակն էր աջակցել Արցախից բռնի տեղահանված անձանց[6]՝ բարձրացնելով նրանց իրավական պաշտպանվածությունը, աջակցելու հնարավորություն պետությանը՝ այդ թվում Ներքին գործերի նախարարությանը (ՆԳՆ) և շահագրգիռ կառույցներին՝ արդյունավետորեն արձագանքելու տեղահանվածների կարիքներին:

ԻՀԱ-ն տրամադրել է անհատական իրավաբանական խորհրդատվություն բռնի տեղահանված անձանց՝ նրանց խնդիրների լուծման հարցերով պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դատարանների, պետական մասնակցությամբ կազմակերպությունների և հանրային նշանակության ծառայություններ մատուցող կառույցների հետ փոխհարաբերություններում: Խորհրդատվության հիմնական մասի հարցերը վերաբերում էին՝

- իրավական կարգավիճակին,
- ժամանակավոր պաշտպանության (փախստականի) վկայականի տրամադրմանը,
- քաղաքացիության ընդունման և փաստաթղթավորման ընթացակարգերին,
- սոցիալական և բնակարանային ապահովությանը,
- գույքային և վարչարարական իրավունքների վերականգնմանը:

Ծրագրի շրջանակում ԻՀԱ-ն իրականացրել է տեղահանվածների խնդիրների ակտիվ լուսաբանում[7]՝ նպատակ ունենալով դարձնել նրանց իրավական կարիքները տեսանելի պետական կառույցների, միջազգային գործընկերների և հասարակության համար: Բացի այդ, հրապարակվել են իրավական իրազեկումներ՝ ուղղված տեղահանված անձանց իրավունքների և պաշտպանության երաշխիքների հասանելի ու հստակ ներկայացմանը: Սա կարևոր է հատկապես ՆԳՆ-ի համար, քանի որ վերջինս իրականացնում է մի շարք վարչարարական, միգրացիոն և փաստաթղթավորման գործընթացներ, որոնք ներառում են տվյալ խումբը:

Ծրագրի արդյունքում մշակվել է հանրային քաղաքականության փաստաթուղթ[8], որը ներառում է ոլորտային առանցքային խնդիրները և դրանց լուծման ուղիները՝

- **Իրավական կարգավիճակ** – անհրաժեշտությունը հստակեցնել տեղահանված անձանց կարգավիճակը և դրանից բխող երաշխիքները:

---

[5] https://armla.am/51637.html
[6] https://armrights.am/am
[7] https://armrights.am/am/news
[8] https://armla.am/55094.html

• **Սոցիալական ինտեգրում** – ինտեգրման ընթացակարգերի կատարելագործում՝ զբաղվածության, կրթության և առողջապահության ոլորտներում:

• **Բնակարանային ապահովում** – կացարանի տրամադրման ընթացակարգերի բարելավում ու երկարաժամկետ լուծումների մշակումը:

• **Փաստաթղթավորում** – անձնական փաստաթղթերի, գույքային իրավունքների և վարչարարական հարցերի պարզեցում ու արդյունավետացում:

Այս փաստաթուղթը կարևոր գործիք է պետական մարմինների, այդ թվում՝ ՆԳՆ-ի համար, քանի որ վերջինս իրականացնում է միգրացիոն քաղաքականություն, փաստաթղթավորման գործընթացներ, քաղաքացիության ընդունման ընթացակարգեր, արտակարգ իրավիճակներով պայմանավորված աջակցություն և իրավակարգի ապահովում:

Ծրագրի շրջանակում ձևավորվել է նաև Արցախից բռնի տեղահանվածների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող ՔՀԿ-ների ցանց: ՔՀԿ-ների ցանցի հետ միասին իրականացվել է նաև ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2023–2025 թթ. գործողությունների ծրագրի 2023–2024 թթ. հատվածի հասարակական մշտադիտարկում[9]:

Մշտադիտարկման արդյունքում անդրադարձ է կատարվել նաև **Ռազմավարության 12-րդ ոլորտին**, որը ներառում է Արցախից բռնի տեղահանված անձանց վերաբերող գործողություններ, որոնց իրականացնող մարմին հանդիսանում է ՆԳՆ-ը: Այս գնահատումը հնարավորություն է տվել ստանալ անկախ վերլուծություն ՆԳՆ-ի կողմից իրականացվող քաղաքականությունների արդյունավետության, նպատակահարմարության և բարելավման կարիքների վերաբերյալ:

3. Նշենք նաև, որ ԻՀԱ-ի կողմից գործարկվող **Iravaban.net**[10] լրատվական կայքը, իր բազմաբովանդակ և թեմատիկ բաժինների միջոցով, իրականացնում է այնպիսի գործունեություն, որը զգալիորեն առնչվում է ՀՀ Ներքին գործերի նախարարության հիմնական գործառույթներին, ոլորտային քաղաքականություններին և ռազմավարական առաջնահերթություններին:

Կայքը մշտական ռեժիմով ապահովում է հանրային իրազեկվածության բարձրացում ներքին անվտանգության, ոստիկանության բարեփոխումների, ճանապարհային երթևեկության անվտանգության, արտակարգ իրավիճակների կանխարգելման, բնակչության պաշտպանության, անձնագրային և փաստաթղթավորման գործընթացների, միգրացիոն քաղաքականության, համայնքային անվտանգության և ՆԳՆ-ի այլ հիմնարար ուղղությունների վերաբերյալ:

[9] https://armla.am/55094.html
[10] https://iravaban.net

Այն հրապարակում է վերլուծություններ, հոդվածներ, նորություններ, փորձագիտական կարծիքներ և մատչելի տեղեկատվական նյութեր[11], որոնք ներկայացնում են ՆԳՆ-ի համակարգում իրականացվող բարեփոխումները, օրենսդրական փոփոխությունները, վարչարարական պրակտիկան և ոլորտային ընթացիկ նախաձեռնությունները։

Iravaban.net-ը կարևոր դեր է կատարում հանրային վստահության ձևավորման, իրավական տեղեկատվության մատչելիության ապահովման և նախարարության կողմից իրականացվող քաղաքականությունների բաց, թափանցիկ և հաշվետու իրականացումը հանրությանը ներկայացնելու գործում։

4. «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի հետ համագործակցությամբ իրականացրել է «Երիտասարդ առաջնորդների հակակոռուպցիոն դպրոց» հակակոռուպցիոն մասնագիտական կրթական նախաձեռնությունը ոչ ֆորմալ ուսուցման ձևաչափով[12]։ Դպրոցի հիմնական նպատակն է զարգացնել հակակոռուպցիոն միջավայրը և խթանել բարեխղճության մշակույթը Հայաստանում՝ տարածելով հակակոռուպցիոն գիտելիքներ և սկզբունքներ, ինչպես նաև տրամադրել երիտասարդ մասնագետներին հնարավորություններ՝ կառուցելու իրենց կարիերան պետական և առաջատար մասնավոր կազմակերպություններում։

«Երիտասարդ առաջնորդների հակակոռուպցիոն դպրոցին» մասնակցել են Հայաստանի բուհերի իրավաբանական, կառավարման, տնտեսագիտական, ֆինանսական, լրագրության և այլ ֆակուլտետներում սովորող ուսանողներ, ինչպես նաև նույն ֆակուլտետների մինչև 30 տարեկան շրջանավարտներ։

Ուսուցումն իրականացվել է հինգ փուլով՝

- Առցանց ուսուցման փուլ
- Խորացված ուսուցման փուլ
- Պրակտիկ հմտությունների զարգացման փուլ
- Հանրային իրազեկման փուլ
- Եզրափակիչ փուլ

«Հակակոռուպցիոն դպրոցում դասավանդել են ոլորտի ճանաչված փորձագետներ՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ նախագահ, Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի քարտուղարության համակարգող Կարեն Զադոյանի

---

[11] https://iravaban.net/540339.html , https://iravaban.net/539962.html , https://iravaban.net/539825.html, https://iravaban.net/539263.html , https://iravaban.net/529265.html , https://iravaban.net/449329.html , https://iravaban.net/538920.html , https://iravaban.net/490735.html , https://iravaban.net/539091.html , https://iravaban.net/534864.html

[12] https://armla.am/?s=%D5%A5%D6%80%D5%AB%D5%BF%D5%A1%D5%BD%D5%A1%D6%80%D5%A4+%D5%A1%D5%BC%D5%A1%D5%BB%D5%B6%D5%B8%D6%80%D5%A4%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB+%D5%B0%D5%A1%D5%AF%D5%A1%D5%AF%D5%B8%D5%BC%D5%B8%D6%82%D5%BA%D6%81%D5%AB%D5%B8%D5%B6+%D5%A4%D5%BA%D6%80%D5%B8%D6%81

ղեկավարությամբ, ինչպես նաև պատկան մարմինների ներկայացուցիչներ և ոլորտի այլ դերակատարներ։

**Ծրագիրը կապված է նաև ՀՀ Ներքին գործերի նախարարության (ՆԳՆ) գործունեության հետ**, քանի որ այն նպաստում է նախարարության կողմից իրականացվող հակակոռուպցիոն քաղաքականությունների, իրավական բարեփոխումների և ներքին անվտանգության ոլորտում թափանցիկության բարձրացման նպատակների իրագործմանը։ Երիտասարդ մասնակիցների կրթությունն ու պատրաստությունը ամրապնդում է պետական համակարգում բարեխղճության մշակույթի զարգացմանը, որոնք կարող են անմիջապես ներդրվել ՆԳՆ-ի գործունեության ոլորտներում՝ ոստիկանության, փաստացի վերահսկողության, ներքին անվտանգության և համայնքային անվտանգության ծրագրերում։

**Ծրագրի հաջողությամբ ավարտած շուրջ 20 մասնակիցներին տրամադրվել են «Երիտասարդ առաջնորդների հակակոռուպցիոն դպրոցի» ավարտական վկայականներ**, ինչը ապահովում է մասնագիտական պատրաստվածության վկայագիր և ամրապնդում նրանց ներգրավվածությունը պետական և մասնավոր ոլորտներում բարեխղճության և հակակոռուպցիոն քաղաքականությունների զարգացման գործընթացներում։

5. **Իրավաբանների հայկական ասոցիացիան (ԻՀԱ)** իր գործունեության կարևոր ուղղություններից մեկն է համարում իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ **մասնագիտական կարծիքների, դիտարկումների և առաջարկությունների ներկայացումը**[13], ինչը ծառայում է օրենսդրական գործընթացների բարելավմանն ու հանրային շահի պաշտպանությանը։

   ԻՀԱ-ի կողմից ներկայացված ուսումնասիրությունները և դիրքորոշումները հիմնված են խորքային իրավական վերլուծությունների, միջազգային փորձի, արդի դատական պրակտիկայի և ոլորտային քաղաքականությունների համադրության վրա։ Դրանք ներառում են՝

   - գործող կամ նախագծվող իրավական ակտերի իրավաքաղաքական և իրավատեխնիկական գնահատում,
   - առաջարկվող կարգավորումների համապատասխանության վերլուծություն միջազգային ստանդարտներին և Հայաստանի ստանձնած իրավական պարտավորություններին,
   - իրավակարգավորման հնարավոր ռիսկերն ու ազդեցությունները իրավական պետության, մարդու իրավունքների պաշտպանության, հակակոռուպցիոն և արդարադատության ոլորտների վրա,
   - ինչպես նաև կիրառման պրակտիկ խնդիրների կանխատեսում և դրանց նվազեցման ուղիների ներկայացում։

[13] https://armla.am/54395.html , https://armla.am/52202.html , https://armla.am/51471.html , https://armla.am/50910.html , https://armla.am/54048.html

ԻՀԱ-ի դիտարկումները կարևոր դեր են խաղում պետական մարմինների, մասնավորապես՝ օրենսդիր և գործադիր իշխանությունների համար՝ ապահովելով

- քաղաքականության մշակման ավելի բարձր որակ,
- իրավական ակտերի առավել ճշգրիտ, աշխատունակ և իրականությանը համահունչ ձևակերպումներ,
- ինչպես նաև ավելի թափանցիկ, հանրային մասնակցության վրա հիմնված որոշումների կայացում։

ԻՀԱ-ի կողմից ներկայացված կարծիքներն ու առաջարկությունները մշտապես ուղեկցվել են **հիմնավորված փաստարկներով**, ընդգրկուն իրավական հիմնավորումով և ոլորտային փորձագիտական գնահատմամբ։ Դրանք ոչ միայն նպաստել են կոնկրետ նախագծերի բարելավմանը, այլ նաև ձևավորել են **հանրային վերահսկողության կայուն մեխանիզմ**, որն ուղղված է պետական քաղաքականությունների որակի բարձրացմանը։

ԻՀԱ-ն ներկայացրել է կարծիք, դիտարկումներ և առաջարկություններ նաև հանցավորության դեմ պայքարի 2025–2030 թթ. ռազմավարությունից բխող 2025–2027 թթ. միջոցառումների ծրագրի նախագծի վերաբերյալ՝ նպատակ ունենալով ապահովել ռազմավարության և ծրագրի գործնական կիրառելիությունն ու արդյունավետ իրագործումը։

6. ԵՄ ֆինանսավորմամբ և ԲԿԳ ազգային գործողությունների ծրագրի շրջանակներում ԻՀԱ-ն իրականացրել է բաց արդարադատության և հակակոռուպցիոն հանձնառությունների բազմակողմանի իրականացումը։

Ծրագրի շրջանակում առանձնահատուկ շեշտադրվել է տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը, ներառյալ՝

- «eCourt-statistics» միացյալ թվային գործիքների մշակումը և փորձարկումը՝ դատական վիճակագրության ավելի պարզ, հասանելի և վստահելի ներկայացում ապահովելու համար,
- **հանրային պաշտոնատար անձանց նվերների ռեեստրի** սկզբունքային մոդելի ձևավորումը՝ որպես Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի համար նոր գործիք՝ վերահսկողությունը ուժեղացնելու նպատակով։

Ծրագրի ընթացքում կազմակերպվել են **8 ֆոկուս խմբային քննարկումներ**, որոնց մասնակցել են պետական մարմինների ներկայացուցիչներ, մասնավոր հատվածի ներկայացուցիչներ, ՔՀԿ-ներ, լրագրողներ և ոլորտային փորձագետներ։ Քննարկումները հնարավորություն են տվել հավաքագրելու բազմակողմանի կարծիքներ, բացահայտելու իրավական և գործնական խնդիրներ, և համադրել միջազգային լավագույն փորձը հայկական իրողություններին։

Ծրագրի արդյունքում կազմվել են **փորձագիտական վերլուծություններ**, հիմնավոր **հաշվետվություններ** և թեմատիկ **առաջարկությունների փաթեթներ**, որոնք տրամադրվել են.

- ՀՀ արդարադատության նախարարությանը,
- Բարձրագույն դատական խորհրդին,
- Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին։

Այս փաստաթղթերը ծառայել են նոր ռազմավարությունների մշակման, գործող քաղաքականությունների կատարելագործման և պետական մարմինների կողմից ստանձնած բաց կառավարման ու հակակոռուպցիոն հանձնառությունների արդյունավետության բարձրացման նպատակին։